

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ԼՐԱԲԵՐԻ» ԷԶԵՐՈՒՄ. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԶՈՒԽԱԾՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Աննա Ասատրյան

Արվեստագիտության դոկտոր
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան պողոտա 24/4
Էլ. հասցե՝ annaasatryan2013@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 05.04.2021, գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 28.06.2021
DOI: 10.53548/03208117-2021.2-251

Ներածություն

Հայկական պարբերական մամուլում հայ երաժշտության դասական, հայ երաժշտական թատրոնի հիմնադիր, հանճարեղ կոմպոզիտոր, շնորհաշատ դաշնակահար, տաղանդավոր դիրիժոր, վաստակաշատ մանկավարժ, եռանդուն երաժշտական-հասարակական գործիչ Տիգրան Զուխաճյանի (1837-1898) կյանքին ու գործունեությանը նվիրված առաջին հրապարակումներն ի հայտ են եկել դեռևս 1870-ական թվականներին. Երուսաղեմում հրատարակվող «Սիոն»-ի՝ 1871 թ. 9-րդ համարի «Բանասիրական» բաժնում (էջ 196-198) տպագրվել է Ա. Այվազյանի «Արշակ Բ» նվագերգությունը-երաժշտություն Զուխաճյանի» հոդվածը: Կոմպոզիտորի կյանքի օրոք նրա մասին հոդվածներ են տպագրվել Թիֆլիսի («Մեղու Հայաստանի», «Արձագանք», «Մշակ», «Նոր դար», «Տարազ»), Կ. Պոլսի («Արևելք», «Հայրենիք», «Մասիս»), Զմյուռնիայի («Արևելյան մամուլ») և Վիեննայի («Հանդես ամսօրյա») պարբերականներում:

Տ. Զուխաճյանի կյանքի ու երաժշտական ժառանգության հանդեպ գիտական հետաքրքրությունն սկիզբ առավ խորհրդային տարիներին՝ սկզբնավորելով չուխաճյանագիտությունը, որտեղ իր ծանրակշիռ խոսքն է ասել ակադեմիական չուխաճյանագիտությունը: 1956-ին լույս է տեսնում ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության ու տեսության սեկտորի կարևոր ձեռքբերումներից մեկը՝ հայ երաժշտական թատրոնի ամբողջական պատմության ստեղծման առաջին փորձը՝ Գեորգի Տիգրանովի «Армян-

ский музыкальный театр» քառահատոր հիմնարար աշխատության առաջին հատորը, որի երկրորդ գլուխը վերաբերում էր Տ. Չուֆաճյանի օպերային ստեղծագործությանը, մասնավորապես «Արշակ Բ» օպերայի ուսումնասիրությանը¹: Հայ երաժշտական թատրոնի առաջնեկին էր նվիրված Գևորգ Գյոդակյանի՝ 1971-ին լույս տեսած «Տիգրան Չուֆաճյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան»² և «Тигран Чухаджян и его опера «Аршак Второй»»³ մենագրությունները: Չուֆաճյանին էր անդրադարձել Մաթևոս Մուրադյանն իր «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում» աշխատության մեջ⁴:

Երաժշտագետներին զուգահեռ՝ Տ. Չուֆաճյանի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրության հարցերով զբաղվել են հայ թատրոնի պատմաբանները ևս: Գառնիկ Ստեփանյանի «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» աշխատության մեջ ուսումնասիրության առարկա են դարձել պոլսահայ երաժշտական թատրոնի գործիչները, որոնք ԺԹ դարի երկրորդ կեսին մեծապես նպաստեցին հայ երաժշտական թատրոնի հիմնարկմանն ու աննախադեպ առաջընթացին: Ի դեպ, հենց Գառնիկ Ստեփանյանը հայտնաբերեց և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց Տ. Չուֆաճյանի «Ինդիանա» օպերան՝ 1957 թ. «Գարուն» ամսագրում հրապարակելով «Տիգրան Չուֆաճյանի մի անհայտ օպերայի մասին» հոդվածը⁵:

Մեր նպատակն է լուսաբանել ակադեմիական չուֆաճյանագիտության կայացման ու առաջընթացի գործում «Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականի ներդրումը:

Հայոց անդրանիկ օպերան՝ Տիգրան Չուֆաճյանի «Արշակ Բ»-ն

Ակադեմիական չուֆաճյանագիտության մեջ «Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականի առաջին անդրադարձը նվիրված էր հենց հայոց առաջին օպերային՝ «Արշակ Բ»-ին: «Լրաբերի» 1972 թ. 8-րդ համարում տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի վարիչ, արվեստագիտության դոկտոր

¹ Тигранов 1956, 131-174.

² Գյոդակյան 1971:

³ Геодакян 1971.

⁴ Մուրադյան 1970:

⁵ Ստեփանյան 1957, 49-50:

Գառնիկ Ստեփանյանի ««Արշակ Բ» օպերայի ստեղծագործական պատմության մի քանի հարցեր» վերնագրով ծավալուն հետազոտությունը՝ «Լրաբերի» էջերում թատրոնի պատմաբանի միակ հոդվածը:

Նշելով, որ թուրքական հանրագիտարանը «փորձում է Չուֆաճյանին համարել ծագումով հայ թուրքական երգահան»⁶, նա արձանագրում է, որ «Չուֆաճյանի կյանքի ու ստեղծագործության բազմակողմանի ուսումնասիրումը դեռ մեր երաժշտագետների պարտքն է մնում»⁷: Հեղինակն իրավացիորեն նկատում է, որ թեև տոնվեց «Արշակ Բ»-ի ստեղծման հարյուրամյակը, սակայն «դեռ հրապարակի վրա չունենք թեկուզ հանրամատչելի մի մենագրություն այդ օպերան ստեղծողի մասին, մինչդեռ բազմաթիվ հարցեր սպասում են իրենց գիտական մեկնաբանությանը»⁸:

Եվ ձևակերպում է այդ հարցերից մի քանիսը, այն է՝

«ա) Մինչև այժմ չունենք Չուֆաճյանի երկերի լրիվ ցանկը, չունենք ո՛չ միայն նրա հայրենասիրական, քնարական երգերի, թատերական ներկայացումների համար գրած երաժշտությունների, այլև ծավալուն ստեղծագործությունների ցանկը: Մինչև վերջին տարիներս կարծվում էր, թե «Ձեմիրեն» Չուֆաճյանի վերջին ստեղծագործությունն է. պարզվեց, որ դրանից հետո նա գրել է «Ինտիանան»: Երաժշտագետ Մ. Մուրադյանի նոր գրքում ասվում է, թե նրա վերջին գործը «Եմիշճիներ» օպերետն է, որը մնացել է անավարտ: Անցյալ տարի լույս տեսած թուրքական հանրագիտարանում հանդիպում ենք երկու նոր անունների՝ թուրք բանաստեղծ Իբրահիմ Շինասիի «Բանաստեղծի ամուսնությունը» կատակերգության հիման վրա գրված մի գործ և «Դպրոցի վարպետը», որի ինչ լինելն էլ չգիտենք:

բ) Չուֆաճյանի հայտնի երեք օպերետներից հետազոտվել ու գնահատվել է միայն «Լեպլեպիճի Հորհոր աղան»: «Արիֆի խարդախության» և «Քյոսե քեիյայի» մասին ունենք աղոտ տեղեկություններ, մինչդեռ երկուսն էլ XIX դ. 70-ական թվականներից մինչև մեր օրերը բազմաթիվ անգամներ ցուցադրվել են ոչ միայն Թուրքիայում, այլև Հունաստանում, Բուլղարիայում, Եգիպտոսում և այլուր, արժանանալով մեծ հետաքրքրության: Դրանց նոտաները հնարավոր է ձեռք բերել, իսկ ինչ վերաբերում է լիբրետոտոների, ապա՝ «Արիֆի» լիբրետտոն հայատառ թուրքերենով, ըն-

⁶ Ստեփանյան 1972, 12:

⁷ Ստեփանյան 1972, 13:

⁸ Ստեփանյան 1972, 13:

դամենը մեկ երկու էջի պակասով, պահվում է գրականության և արվեստի թանգարանում», «Քյոսե քեհյայինը», արդեն հայերեն թարգմանությամբ, լույս է տեսել պոլսահայ մամուլում»⁹:

Ի դեպ, առաջ անցնելով նշենք, որ տարիներ ու տասնամյակներ անց հենց «Լրաբերի» էջերում առաջին անգամ տպագրվեցին նշված օպերաների մեր ուսումնասիրությունների արդյունքները:

Շարունակելով ուսումնասիրման ու պարզաբանման կարոտ հարցադրումների իր շարքը՝ Գ. Ստեփանյանը գրում է.

«գ) Վիճելի շատ հարցեր կան հենց «Արշակ Բ» օպերայի ստեղծման հետ կապված, վերջնականապես ճշտված է, թե ե՞րբ, ո՞րտեղ, հասարակական-քաղաքական ի՞նչ իրադարձությունների մեջ է գրել Չուխաճյանը այդ օպերան, ներկայացվե՞լ է այն անցյալում, ի՞նչ արձագանքներ է ունեցել ժամանակի մամուլում»¹⁰: Այս ամենի քննարկումը, որը ծավալուն հետազոտության նյութ է, թողնելով մասնագետներին, Գ. Ստեփանյանը փորձում է լույս սփռել «Արշակ Բ»-ի ստեղծման պատմությանն առնչվող որոշ հարցերի վրա՝ առանձնացնելով դրանցից չորսը՝

«ա) «Արշակ Բ» օպերայի ստեղծման քաղաքական նախադրյալները.

բ) Ե՞րբ, ո՞րտեղ, ի՞նչ պայմաններում է հորինվել այդ օպերան.

գ) Լիբրետտոյի հետ կապված խնդիրներ.

դ) «Արշակ Բ-ն» բեմադրվե՞լ է ստեղծման տարիներին»¹¹:

Մանրամասն քննության առնելով օպերայի ստեղծման քաղաքական նախադրյալները՝ հեղինակը եզրակացնում է, որ արևմտահայ իրականության մեջ ոչ միայն առկա են եղել օպերա ստեղծելու նախադրյալները, այլև կատարվել են օպերա գրելու փորձեր Տիգրան Չուխաճյանից առաջ կամ նույն տարիներին: Գ. Ստեփանյանը նկատի ունի ճարտարապետ Սարգիս Պալյանի «Քրիստափոր Կոլումբոս» խորագրով օպերան, որը նաև կատարվել է, և հայտնի փիլիսոփա Գալուստ Կոստանյանի՝ հայկական օպերա գրելու փորձը, որը նա կատարել է 1863-ին Ջմյուռնիայում՝ Ջեյթունի ապստամբության խանդավառ օրերին: Օպերան ասպարեզ չի ելել, քանի որ, Ստեփանյանի կարծիքով, Ջեյթունի ապստամբության ճնշումից հետո սկսվել էին քաղաքական խստությունները:

Գ. Ստեփանյանը քննության է առնում օպերայի լիբրետոյի ընտ-

⁹ Ստեփանյան 1972, 13:

¹⁰ Ստեփանյան 1972, 13:

¹¹ Ստեփանյան 1972, 14:

րության հարցը՝ ինչու հենց Արշակ Բ-ն և ոչ թե ասենք Տիգրան Մեծը: Հեղինակի կարծիքով՝ «Արշակ Բ»-ն ավելի էր համապատասխանում այդ տարիների քաղաքական մտայնությանը՝ միևնույն ժամանակ բարձրացնում էր հայոց պետականության ամրապնդման հարցը: Եվ պատահական չէ, որ այդ ժամանակահատվածում են գրվել Արմենակ Հայկունու «Օլիմպիա» (1858), Խորեն Գալֆայանի «Արշակ Բ» (1862), Մկրտիչ Պեշկեթաշյանի «Արշակ Երկրորդ» ողբերգությունները, Թովմաս Թերգյանի «Արշակ Բ» դրաման և էմանվել Եսայանի «Արշակ Բ» ողբերգությունը:

«Ուշագրավ փաստ է, - գրում է Գ. Ստեփանյանը, - որ «Արշակ Երկրորդի» սյուժեն գայթակղեցրել է անգամ թուրք գրողներին: Այսպես՝ Ալի Հայդարը գրել է «Արսաս Երկրորդ» ողբերգությունը, որի բովանդակությունը նույնն է, ինչ Թերգյանի «Արշակ Երկրորդի» նյութը: Երկու գործողությունից բաղկացած այդ պիեսը մեր ձեռքի տակ չլինելով՝ դժվարանում ենք որոշակի բան ասել նրա մասին, թուրք թատրոնի պատմաբան Ռեֆիկ Ահմեդի ժլատ տեղեկություններից երևում է, որ Ալի Հայդարի հերոսը՝ Արշակ Երկրորդը, եղել է հին ժամանակների ինքնակալներից մեկը, պատերազմներ է մղել պարսից Շապուհ թագավորի դեմ. ամուսնացել է բյուզանդական արքունիքից բերված Օլիմպիայի հետ, բայց իր երկրորդ կինը խանդից թունավորել է վերջինիս»¹²:

Գ. Ստեփանյանը փորձում է պատասխանել իր առաջադրված հարցին՝ ե՞րբ է գրվել «Արշակ Բ» օպերան՝ 1868-ի՞ն, թե՞ ավելի շուտ: Եվ իր պրպտումներից հետո Գ. Ստեփանյանը եզրակացնում է, որ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ» օպերան գրվել է Զեյթունի ապստամբությունից անմիջապես հետո՝ 1863 թ. Միլանում: «Հնարավոր է, որ Պոլսում, 1864-1865 թթ. հեղինակը կատարած լինի որոշ լրացումներ թողնելով միայն նախերգանքը»¹³:

Հետազոտության եզրափակիչ հատվածում, փորձելով պատասխանել «Բեմադրվե՞լ է, արդյոք, օպերան ստեղծման տարիներին, թե՞ կատարվել է միայն նախերգանքը» հարցին, Գ. Ստեփանյանը «Լրաբերի» էջերում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դնում ժամանակի մամուլում իր հայտնաբերած շատ արժեքավոր վկայություն, որը վերաբերում է հենց Նաումի թատրոնում այդ թվականին կատարված աշխատանքներին:

Ու քանի որ դա առաջին գրավոր վավերական վկայությունն էր

¹² Ստեփանյան 1972, 18:

¹³ Ստեփանյան 1972, 18-20:

ժամանակի թերթերում և մինչև այժմ վրիպել էր Չուխաճյանի ժառանգությանը զբաղվող բոլոր բանասերների ու երաժշտագետների ուշադրությունից, ապա հեղինակը, մանրամասն ներկայացնելով այն, եզրակացնում է, որ «Տիգրան Չուխաճյանի «Արշակ Բ» օպերան ոչ թե գրվել է Կոստանդնուպոլսում 1868 թ., ինչպես մինչև հիմա գրվել է, այլ Միլանում՝ 1863 թ., Ջեյթոնի ապստամբության խանդավառ օրերին, երբ ամբողջ հայ իրականությունը լիքքավորված էր ազատագրական պայքարով: Օպերայի նախերգանքը, գուցե և որոշ հատվածներ էլ գրվել են հետագայում: Նախերգանքից բացի, որ քանիցս կատարվել է Պոլսի տարբեր թաղամասերում, ինչպես և Նեապոլում ու Վիեննայում, ըստ երևույթին, ամբողջ օպերան էլ կամ հատվածաբար, բեմադրվել է Նաումի թատրոնում, 1869-1870 թատերաշրջանում»¹⁴:

Տարիներ անց «Լրաբերը» մեկ անգամ ևս անդրադարձավ «Արշակի» ստեղծման ժամանակին ու վայրին: 1986 թ. 4-րդ համարում տպագրվում է Սամվել Իսկանդարյանի «Ե՛րբ և որտե՛ղ է գրվել «Արշակ Բ» օպերան» հոդվածը, որտեղ երկար տարիներ Թ. Թերգյանի ստեղծագործության ուսումնասիրությամբ զբաղված գրականագետը փորձում է պարզել, թե երբ և որտեղ է գրվել Թովմաս Թերգյանի լիբրետոն:

Ելնելով այն հանգամանքից, որ Թերգյանն իր լիբրետոն գրելիս ստիպված է եղել հաշվի նստել կոմպոզիտորի ցանկությունների, դիտողությունների ու պահանջների հետ, այն էլ, ինչպես դժկամորեն բողոքում է նա, ամեն օր փոփոխություններ մտցնելով իր գրվածքի մեջ, հետազոտությամբ Իսկանդարյանը եզրակացնում է, որ «Արշակ Բ» օպերան ստեղծվել է կոմպոզիտորի և լիբրետիստի սերտ համագործակցությամբ: «Իսկ նման համագործակցություն, ինքնին հասկանալի է, հնարավոր էր երկուսի միաժամանակ միևնույն տեղում, գոնե նույն քաղաքում գտնվելու դեպքում: Տիգրան Չուխաճյանը Միլանից վերադարձել է 1864 թ., իսկ 1868-ին օպերան արդեն պատրաստ է եղել, ամբողջությամբ՝ կամ հատվածաբար բեմադրվել Նաումի իտալական թատրոնում, հետևաբար՝ այն գրվել է 1864-1868 թվականներին, Կոստանդնուպոլսում, թեև մտահղացումն ավելի վաղ է եղել: Ապացո՞ւյց. Միլանից Չուխաճյանի բերած նախերգանքը: Եվ որովհետև 1868 թ-ին է Տիգրան Չուխաճյանն ավարտել իր անդրանիկ օպերան, հենց այդ թվականն էլ պետք է համարել հայ

¹⁴ Ստեփանյան 1972, 23:

երաժշտական թատրոնի հիմնադրման տարեթիվը»¹⁵:

2006 թվականին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց Աննա Ասատրյանի առաջին մենագրությունը՝ ««Արշակ Բ». հայոց անդրանիկ օպերան» աշխատությունը¹⁶, որը հեղինակը նվիրել էր ծնողներին՝ Գրիգոր Ասատրյանին և Զուլետա Ճշմարիտյանին: Հեղինակը քննության էր առել Տ. Չուխաճյանի և Թովմաս Թերզյանի հեղինակած «Արշակ Բ» պատմառոմանտիկական օպերայի թատերատեսությունը, բացահայտել երաժշտական լեզվի առանձնահատկությունները, ներկայացրել օպերայի բեմական ճակատագիրը: Հավելվածում տեղ էին գտել «Արշակ Բ»-ի թերզյանական և գուլակյանական լիբրետոները:

«Լրաբերի» 2007 թ. 2-րդ համարում տպագրվեց ««Արշակ Բ». հայոց անդրանիկ օպերան» աշխատության վերաբերյալ արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանի «Оптимизм науки» վերնագրով գրախոսականը¹⁷:

Հայկական առաջին կոմիկական օպերան. Տիգրան Չուխաճյանի «Արիֆի խորամանկությունը»

Հայ երաժշտական թատրոնի պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի 1872 թ. դեկտեմբերի 9-ը. Կ.Պոլսի Գետիկ-փաշայի թատրոնում բեմադրվեց հայկական առաջին կատակերգական օպերան՝ Տիգրան Չուխաճյանի «Արիֆի խորամանկությունը»՝ միաժամանակ նշանավորելով թուրքական երաժշտական թատրոնի սկզբնավորումը: Թուրքական «İbret» թերթում Նամիք Քեմալը գովեստի խոսքեր է ուղղում «Արիֆին» և ողջունում այն՝ որպես «մեր սեփական լեզվով գրված առաջին օպերա: Այն շատ լավ է բեմադրված և նրա երաժշտությունն անթերի է: Թուրքերեն լեզուն ինքնին շատ երաժշտական է: Երաժշտությունը հորինված է քնարականության պահպանմամբ»¹⁸:

«Արիֆի խորամանկությունը» առաջին պրոֆեսիոնալ օպերան էր ամբողջ Մերձավոր Արևելքում: Օպերայի թատերատեսորի հեղինակն էր հայ օպերային երգիչ, «Երոպ. երաժշտանոցի մեջ ուսած՝ Թրքահայ առաջին երգիչ», տենոր Հովհաննես Վ. Աճեմյանը: Դա է վկայում Ե. Չարենցի

¹⁵ Իսկանդարյան 1986, 41:

¹⁶ Ասատրյան 2006:

¹⁷ Рухкян 2007, 256-269.

¹⁸ Tuglaci 1986, 136.

անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող Չուփաճյանի դիվանում գտնվող օպերայի կլավիրներից մեկի առաջին էջում (կլավիրը տիտղոսաթերթ չունի) սև թանաքով ձեռագիր գրառումը. «Այս օբերան գրուած է Կօկօլի՝ Ռէվիզորի վրայ և վերածած է թրքական կեանքի Յովհաննէս Աճէմեան և անունը տրած է «Արիֆ»»:

«Արիֆի» ներկայացումը հայ երաժշտական իրականության մեջ առաջին դեպքն էր, երբ բեմ էր բարձրանում հայ կոմպոզիտորի օպերան, որը կատարում էին հայ արտիստները: Ըստ էության, սա ոչ միայն հայկական կոմիկական օպերայի ծննդյան օրն էր, այլև նշանավորեց հայ երաժշտական թատրոնի սկզբնավորումը: Ի տարբերություն Չուփաճյանի նախորդ՝ «Արշակ Բ» օպերայի, որը հեղինակի կենդանության օրոք բեմական կյանքի ուղեգիր չստացավ, 1869-ին ներկայացվեց ընդամենը 3 անգամ, «Արիֆի» բեմադրությունն ունեցավ շոնդալից հաջողություն՝ մեծ հոշակ բերելով հեղինակին:

Եվ ահա, ասես արձագանքելով Գ. Ստեփանյանի՝ «Լրաբերում» տպագրված հոդվածում «Արիֆի» ուսումնասիրության անհրաժեշտության վերաբերյալ առաջ քաշած հարցադրմանը, գիտական պարբերականի 2008 թ. 2-րդ համարում տպագրվում է Աննա Ասատրյանի «Տիգրան Չուփաճյանի «Արիֆի խորամանկությունը» կոմիկական օպերայի երաժշտական ոճի որոշ առանձնահատկությունների մասին» հոդվածը: Ոչ միայն ակադեմիական չուփաճյանագիտության, այլև հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ օպերայի ձեռագրերի հիման վրա հեղինակն ուսումնասիրում է օպերան՝ ըստ գործողությունների, անդրադառնում նրա դրամատուրգիական, երաժշտա-ոճական առանձնահատկություններին, կերպարների բնութագրերին՝ կատարելով մի շարք կարևոր եզրահանգումներ: «Չուփաճյանի կոմիկական օպերաների համայնապատկերում,-գրում է Ա.Ասատրյանը, - «Արիֆն» ունի մի կարևոր առանձնահատկություն. այստեղ Չուփաճյանը, ի տարբերություն իր մյուս կոմիկական օպերաների, մեկ կերպարում է համատեղել իր օպերայի թե՛ կոմիկական և թե՛ քնարական հերոսներին: Արիֆի երաժշտական կերպարն առանձնանալու էր Չուփաճյանի կատակերգական հերոսների շարքում իր հուզական լայն դիապազոնով: Նրա բարդ բնութագրի գրավիչ գծերից են սահուն անցումները բուֆոնադից դեպի իսկական, ոչ կատակային լիրիկա: Քնարական հուզականությամբ է առանձնանում նրա երաժշտական բնութագիրը Մերիեմի հետ զուգերգերում: Մինչդեռ ուրախությամբ և հումորով է

լեցուն վարպետորեն գրված Արիֆի N 4 կավատինան առաջին գործողությունից, իսկ հերոսի անմիջականությամբ ու անթաքույց անկեղծությամբ է ապշեցնում առաջին հայացքից խորամանկ ու հնարամիտ Արիֆի N 15 խոստովանությունը երրորդ գործողությունից»¹⁹: Ակնհայտ է ուսումնասիրության գործնական նշանակությունը. հեղինակն առաջ է քաշում օպերայի կլավիրի և պարտիտուրի հրատարակության և մայր հայրենիքում դրա բեմադրության անհրաժեշտության հարցը:

Հայկական առաջին կոմիկական օպերան. Տիգրան Չուխաճյանի «Քյոսե Քեհյա»

«Լրաբերն» անդրադարձել է նաև Տ.Չուխաճյանի կոմիկական երկրորդ՝ ժամանակին մեծ տարածում ստացած, բայց այսօր մեզ անծանոթ «Քյոսե քեհյա» («Ճաղատ տանուտեր») օպերային՝ գրված ըստ 1870-ականների արևմտահայ թատրոնի առաջնակարգ և անփոխարինելի կատակերգակ դերասան Գարեգին Ռշտունու թատերատետրի:

«Լրաբերի» 2004 թ. 4-րդ համարում տպագրվում է Աննա Ասատրյանի «Տիգրան Չուխաճյանի «Քյոսե քեհյա» կոմիկական օպերան» հոդվածը, որտեղ Երևանի Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում պահպանվող՝ Տ. Չուխաճյանի դիվանում գտնվող «Քյոսե Քեհյայի» ձեռագրերի ուսումնասիրության հիման վրա հեղինակը բացահայտում է օպերայի դրամատուրգիական, երաժշտական, ռեալական առանձնահատկությունները, ներկայացնում օպերայի գլխավոր հերոսների երաժշտական բնութագրերի առանձնահատկությունները: ««Քյոսե քեհյայի» երաժշտական լեզուն, - գրում է Ա. Ասատրյանը, - աչքի է ընկնում պարայնությամբ, պարային (մասնավորապես՝ վալսի) ռիթմերը ներթափանցում են նաև երգամասեր՝ դառնալով հերոսների երաժշտական լեզվի բաղկացուցիչ մասը: Վալսից բացի, Չուխաճյանը կիրառել է պոլկայի և մազուրկայի բնորոշ ռիթմերը: Այսպիսով, «Քյոսե քեհյա» օպերան, որը, անշուշտ, կարելի է դասել համաշխարհային կոմիկական օպերաների հաջողված նմուշների շարքին, հանիրավի մոռացության մատնված, ավելի քան 120 տարի սպասում է իր բեմելուն մայր հայրենիքում, հեղինակային մտահղացմամբ»²⁰:

¹⁹ Ասատրյան 2008, 207:

²⁰ Ասատրյան 2004, 147:

Հայկական առաջին հեքիաթ-օպերան. Տիգրան Չուխաճյանի «Ձեմիրեն»

«Լրաբերի» էջերում արտացոլվել են նաև հայոց առաջին հեքիաթ-օպերայի՝ «Ձեմիրեն» ուսումնասիրության արդյունքները. 1976 թ. 12-րդ համարում տպագրվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու Զառա Տեր-Ղազարյանի «Տ. Չուխաճյանի «Ձեմիրեն» օպերան» հոդվածը:

Նկատելով, որ օպերայի երաժշտությունն օժտված է արտակարգ մեղեդայնությամբ, որին նպաստում է նաև ողջ ստեղծագործության վոկալ մտածողությունը, հեղինակը նշում է, որ օպերայում արևելյանը ձեռք է բերում առաջատար նշանակություն, դառնում գերակշռող, բայց ոչ կոնկրետ հայ կամ թուրք ազգային մշակույթի դրսևորման ձևով, այլ ընդհանրացված, լայն առումով արևելյան երանգի միջոցով, որը եվրոպական երաժշտության մեջ կոչվում է «օրիենտալիզմ»: Սա մի հայացք է արևելյան երաժշտության վրա եվրոպական ընկալման պրիզմայի միջոցով, սակայն մի եվրոպացու, որը ավանդույթներով կապված է Արևելքի հետ, որին ի ծնե հատուկ է երաժշտական արևելյան մտածելակերպը:

«Այսպիսով, - եզրակացնում է Զ. Տեր-Ղազարյանը, - միաձուլելով արևելյան երաժշտության և եվրոպական ժամանակակից օպերային երաժշտության նվաճումները, Չուխաճյանը գրել է մի գործ, որը կարելի է համարել նրա ստեղծագործության քնարական թեմատիկայի իրականացման առավել հաջողված լուծումներից մեկը: Միևնույն ժամանակ, սա մի հետաքրքիր նմուշ է ազգային մշակույթի հողի վրա արևելյան-արևմտյան երաժշտական մշակույթների միաձուլման և այս առումով առաջին երևույթներից մեկը հայ իրականության մեջ»²¹:

Իր ուսումնասիրությունը երաժշտագետը եզրափակում է «Ձեմիրեն» օպերայի՝ հայրենի հողում բեմադրելու անհրաժեշտությամբ:

Տարիներ անց «Լրաբերը» կրկին անդրադարձավ «Ձեմիրենին»:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2009 թ. լույս տեսավ Աննա Ասատրյանի ««Ձեմիրեն». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը» մենագրությունը²², որը նվիրված էր Տ. Չուխաճյանի և Տիգրան Գալեմճյանի հեղինակած հայոց անդրանիկ հեքիաթ-օպերայի՝

²¹ Տեր-Ղազարյան 1976, 26:

²² Ասատրյան 2009:

«Զեմիրեի» գիտական ուսումնասիրությանը: Նոտային օրինակներով հագեցած մենագրության մեջ Ա. Ասատրյանը չուխաճյանագիտության մեջ առաջին անգամ ներկայացրել էր «Զեմիրեի» ստեղծման պատմությունն ու համառոտ ուրվագծել օպերայի բեմական ճակատագիրը, լուսաբանել օպերայի թատերատետրի հեղինակ Տ. Գալեմճյանի կյանքն ու գործունեությունը: «Զեմիրեի» հեղինակային ձեռագրերի մանրախույզ ուսումնասիրության հիման վրա նա բացահայտել էր օպերայի դրամատուրգիական և երաժշտական-ոճական առանձնահատկությունները, գիտական շրջանառության մեջ դրել օպերայի լիբրետոյի ռուսերեն տեքստը:

«Լրաբերի» 2010 թ. 12-րդ միացյալ համարում տպագրվեց մենագրության մասին արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Գայանե Մարգարյանի գրախոսությունը²³:

Չուխաճյանի ստեղծագործության ուսումնասիրության հանրագումարը դարձավ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, պետական պատվերի շրջանակներում 2011-ին՝ Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյա հոբելյանին ընդառաջ հրատարակված Ա. Ասատրյանի «Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը» մենագրությունը²⁴, որը կարևոր հանգրվան դարձավ հայ երաժշտական թատրոնի համընդհանուր պատմության ստեղծման ճանապարհին: Աշխատության մեջ համալիր ուսումնասիրվել և արժեքավորվել է Տ. Չուխաճյանի երաժշտական թատրոնը: Մենագրության մասին արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուֆսյանի գրախոսականը²⁵ տպագրվեց «Լրաբերի» 2011 թ. 4-րդ համարում:

Եզրակացություններ

«Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականը կարևոր ներդրում ունի ակադեմիական երաժշտագիտության՝ մասնավորապես չուխաճյանագիտության ձևավորման, կայացման ու զարգացման գործում: «Լրաբերը», սերտ համագործակցելով երաժշտագիտության գլխավոր կենտրոնի՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ, կանգնեց ակադեմիական չուխաճյանագիտության ակունքներում: Գիտական պարբերականը մի կողմից՝ հրապարակել է Չուխաճյանի ժառանգության, մասնավորապես օպերային արվեստի՝ «Արշակ Բ», «Արիֆի խորամանկութ-

²³ Маргарян 2010, 497-501.

²⁴ Ասատրյան 2011:

²⁵ Рухкян 2011, 297-300.

յունը», «Քյոսե քեչյա» և «Ձեմիրե» օպերաների ուսումնասիրությունների հիմնական արդյունքները, մյուս կողմից՝ գրախոսությունների միջոցով ընթերցողին ծանոթացրել ակադեմիական չուխաճյանագիտության նորույթներին:

Գիտական պարբերականն ամբիոն է տրամադրել ինչպես երաժշտագետներ Զառա Տեր-Ղազարյանին, Մարգարիտա Ռուֆսյանին և Աննա Ասատրյանին, այնպես էլ թատրոնի պատմաբան Գառնիկ Ստեփանյանին և գրականագետ Սամվել Իսկանդարյանին:

Վստահ ենք, որ ապագայում ևս «Լրաբերը», շարունակելով սերտ համագործակցությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտագետների հետ, կշարունակի իր «չուխաճյանականը»:

Գրականություն

Ասատրյան Ա. 2006, «Արշակ Բ». հայոց անդրանիկ օպերան, Երևան, «Ոսկան Երևանցի», 268 էջ:

Ասատրյան Ա. 2009, «Ձեմիրե». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը, Երևան, «Ոսկան Երևանցի», 176 էջ:

Ասատրյան Ա. 2008, Տիգրան Չուխաճյանի «Արիֆի խորամանկությունը» կոմիկական օպերայի երաժշտական լեզվի որոշ առանձնահատկությունների մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, էջ 196-208:

Ասատրյան Ա. 2011, Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Երևան, «Գիտություն», 480 էջ:

Ասատրյան Ա. 2004, Տիգրան Չուխաճյանի «Քյոսե քեչյա» օպերան, Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, Երևան, էջ 133-148:

Գյոդակյան Գ. 1971, Տիգրան Չուխաճյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան, Երևան, «Հայաստան», 48 էջ:

Իսկանդարյան Ս. 1986, Ե՛րբ և որտե՛ղ է գրվել «Արշակ Բ» օպերան, Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, Երևան, էջ 38-41:

Մուրադյան Մ. 1970, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարակզբում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 605 էջ:

Ստեփանյան Գ. 1972, «Արշակ Բ» օպերայի ստեղծագործական պատմության մի քանի հարցեր, Լրաբեր հասարակական գիտությունների, N 8, Երևան, էջ 12-23:

Ստեփանյան Գ. 1957, Տիգրան Չուխաճյանի մի անհայտ օպերայի մասին, Սովետական արվեստ, N 2, էջ 49-50:

- Տեր-Ղազարյան Զ. 1976, Տ. Չուխաճյանի «Ջեմիրե» օպերան, Լրաբեր հասարակական գիտությունների, N 12, Երևան, էջ 22-26:
- Геодакян Г. 1971, Тигран Чухаджян и его опера «Аршак Второй», Ереван, «Айастан», 48 с.
- Маргарян Г. 2010, Աննա Ասատրյան, «Ջեմիրե». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը, 2009, 174 էջ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1-2, Երևան, էջ 497-501:
- Рухкян М. 2007, Оптимизм науки, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, էջ 265-269:
- Рухкян М. 2011, Աննա Ասատրյան, Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, 480 էջ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, Երևան, էջ 297-300:
- Тигранов Г. 1956, Армянский музыкальный театр, т. 1, Ереван, Арм. Гос. Издат., с. 131-174.
- Tuglaci P. 1986, Turkish Bands of Past and Present, Istanbul, "Cem Yayinevi", 248 p.

**ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ԼՐԱԲԵՐԻ» ԷՋԵՐՈՒՄ.
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՉՈՒՒՆԱՃՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ
ԶԱՐԳԱՅՈՒՄԸ**

Աննա Ասատրյան

Ամփոփում

«Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականը կարևոր ներդրում ունի ակադեմիական երաժշտագիտության՝ մասնավորապես չուխաճյանագիտության ձևավորման, կայացման ու զարգացման գործում: «Լրաբերը», սերտ համագործակցելով երաժշտագիտության գլխավոր կենտրոնի՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ՝ կանգնեց ակադեմիական չուխաճյանագիտության ակունքներում: Գիտական պարբերականը մի կողմից՝ հրապարակել է Չուխաճյանի ժառանգության, մասնավորապես օպերային արվեստի՝ «Արշակ Բ», «Արիֆի խորամանկությունը», «Քյոսե քեյա» և «Ջեմիրե» օպերաների ուսումնասիրությունների հիմնական արդյունքները, մյուս կողմից՝ գրախոսությունների միջոցով ընթերցողին ծանոթացրել ակադեմիական չուխաճյանագիտության նորոյթներին:

Գիտական պարբերականը ամբիոն է տրամադրել ինչպես երաժշտա-

գետներ Զառա Տեր-Ղազարյանին, Մարգարիտա Ռուֆսյանին և Աննա Ասատրյանին, այնպես էլ թատրոնի պատմաբան Գառնիկ Ստեփանյանին և գրականագետ Սամվել Իսկանդարյանին:

Պրոպագանդելով հայ մշակույթը և ընթերցող լսարանին հաղորդելով երաժշտագիտության բնագավառի նվաճումները՝ որ ապագայում ևս «Լրաբերը», շարունակելով սերտ համագործակցությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտագետների հետ, կշարունակի իր «չուփածյանականը»:

Բանալի բառեր՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», ակադեմիական չուփածյանագիտություն, Զառա Տեր-Ղազարյան, Մարգարիտա Ռուֆսյան, Աննա Ասատրյան, Գառնիկ Ստեփանյան, Սամվել Իսկանդարյան:

ВОПРОСЫ МУЗЫКОВЕДЕНИЯ НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА «ВЕСТНИК»: ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ АКАДЕМИЧЕСКОГО ЧУХАДЖЯНОВЕДЕНИЯ

Анна Асатрян

Резюме

Журнал «Вестник общественных наук» внес весомый вклад в академическое музыковедение, в частности, в формирование, становление и развитие чухаджяноведения. «Вестник», в тесном сотрудничестве с главным центром музыковедения – с Институтом искусств НАН РА, стоял у истоков академического чухаджяноведения.

На страницах «Вестника» были опубликованы результаты исследований творческого, в частности, оперного наследия Чухаджяна, в том числе опер «Аршак Второй», «Ариф», «Кесе кехва» и «Земирэ». С другой стороны – с помощью рецензий журнал знакомил своих читателей с новинками академического чухаджяноведения.

Пропагандируя армянскую культуру и приобщая читательскую аудиторию к достижениям в сфере музыковедения, «Вестник» предоставил трибуну как музыковедам – Заре Тер-Казарян, Маргарите Рухкян и Анне Асатрян, так и театроведу Гарнику Степаняну и литературоведу Самвелу Искандаряну.

Ключевые слова – «Вестник общественных наук», академическое чухаджяноведение, Зара Тер-Казарян, Маргарита Рухкян, Анна Асатрян, Гарник Степанян, Самвел Искандарян.

**ISSUES OF MUSICOLOGY ON THE PAGES OF THE "HERALD":
FORMATION AND DEVELOPMENT OF ACADEMIC TCHOUHADJIAN STUDIES**

Anna Asatryan

Abstract

The "Lraber hasarakakan gitutyunneri [Journal of Social Sciences]" scholarly periodical has significantly contributed to the academic musicology, in particular, to the emergence, formation and progress of Tchouhadjian Studies. In close collaboration with the main center of musicology – NAS RA Institute of Arts, the "Lraber" became one of the pioneers of academic Tchouhadjian Studies. The scholarly periodical published the major outcomes of researches on Tchouhadjian's legacy – his operas "Arshak II", "Arif's Deception", "Qyose Qehya" and "Zemireh", on the one hand, and reviews – to familiarize the reader with the novelties in academic Tchouhadjian Studies.

While promoting Armenian culture and introducing the readership to the achievements in the field of musicology, the scholarly periodical provided space to the musicologists Zara Ter-Ghazaryan, Margarita Rukhkyan and Anna Asatryan, the theater historian Garnik Stepanyan and literary critic Samvel Iskandaryan.

We are confident that the "Lraber", by continuing close collaboration with the musicologists of NAS RA Institute of Arts, will proceed with its "Tchouhadjianiana".

Key words – "Herald of Social Sciences", Academic Tchouhadjian Studies, Zara Ter-Ghazaryan, Margarita Rukhkyan, Anna Asatryan, Garnik Stepanyan, Samvel Iskandaryan.